



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2019թ. թիվ 493-Ա

**Ն.ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ «ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով, 16-րդ հոդվածի 3-րդ կետի «թ» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 27.06.2019թ. թիվ ԼԴ/0037/01/19 քաղաքացիական գործով վճիռը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. 2019թ. օգոստոսի 5-ից Նաիրա Վանիկի Առաքելյանին ազատել «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և դադարեցնել նրա լիազորությունները:

2. «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ն.Առաքելյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետարանի քարտուղարության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature



Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. օգոստոսի 5
ք.Վանաձոր